ՍՏԵՓԱՆ ԿԵՐՏՈՂ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՅԼ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1908 թվականին հրապարակած հոդվածներից մեկում «Արարատ» ամսագիրը, անդրադառնալով Թուրքիայում հայերի ունեցած կորուստներին, մասնավորապես նշել է. «Առաջին կորուստը հայի հացն է: Ազգը աղքատացել է բառիս նյութական եւ բարոյական իմաստով: Երկրորդ կորուստը հայերի հավատարմությունն է»: Մինչեւ վերջին ժամանակները «բոլոր բարձր պաշտոնները հայերի համար էին, իսկ հիմա՝ ոչ»: «Երրորդ կորուստն հայի վաճառականությունն է: Կ. Պոլիսը կը պանծար հայ վաճառականությամբ, ամիրաների ժամանակից ի վեր Օսմանյան կառավարության դրամական ուժը, իրերի վաճառականությունը առհասարակ հայոց ձեռքն էր. հիմա գերմանն ու հրեան եկած են գրավելու հայոց տեղերն ու դիրքը»[1]:

Սակայն ամսագիրը չէր նշում գլխավորը՝ հայոց հավատքի, Հայ Եկեղեցու կորուստը: Օսմանյան Թուրքիայում գործում էին 15 հայ կաթոլիկ եպիսկոպոսություններ՝ Ադանայում, Խարբերդում, Իզմիդում, Հալեպում, Պուրսայում, Մալաթիայում, իսկ Կոստանդնուպոլսում գտնվում էր հայ կաթոլիկ պատրիարքի նստավայրը: Միայն Մարաշում կային կաթոլիկության 5000-ից ավելի հայ հետեւորդներ: Հայ կաթոլիկների թիվը Օսմանյան կայսրության տարածքում կազմում էր մոտ 100.000: Թուրքիայի եւրոպական մասում Ավստրիայի հովանավորությամբ գործում էին մոտ 60 հայ կաթոլիկ դպրոցներ, իսկ ասիական մասում գերմանացիների օժանդակությամբ՝ 400 հայ կաթոլիկ դպրոցներ: Բացի հայ կաթոլիկ համայնքներից, կային նաեւ բողոքականների համայնքներ՝ Նիկոմեդիայում, գերմանական բողոքական որբանոց՝ Մուշում, գերմանական բողոքական քարոզչություն (միսիա)՝ Հաճնում, Կ. Պոլսում եւ Զմյուռնիայում: Ուրֆան Մերձավոր արեւելքի միսիայի ներկայացուցիչ Քյունցլեր սարկավագի նստավայրն էր[22]:

Այս բոլոր քարոզիչները եւ միսիոներները, որոնք ժամանել էին ավետյաց երկրներից մեկը, ամենահին քրիստոնյա ազգի տարածքում իրենց գործունեությամբ միայն վնասում էին քրիստոնեությանը եւ թուլացնում Արեւելքում քրիստոնեության առաջապարի դիրքերը: Անգիտակցաբար կամ գիտակցաբար նրանք միայն նպաստում էին յուրօրինակ արեւելյան քրիստոնեության ոչնչացմանը: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, 1914 թ. ամռանը, Արեւմտյան Հայաստան այցելող նորնախիջեւանցի Ռուբեն քահանա Բեկգուլյանը, նկարագրելով Վանը, գրում էր. «Փողոցներում լսվում է միայն հայոց լեզուն, թուրքերը համարյա չեն երեւում, քրդերի մասին ձեն չկա: Միայն ժամանակ առ ժամանակ կանցնի ամերիկյան միսիոները եւ դոմինիկյան աբեղան, որոնք եկել են այստեղ քարոզելու Քրիստոսի հավատքը քրիստոնյա հայերի մեջ: Պատիվը շատ մեծ չէ այս մի-

1 «Արարատ», 1908, թ. 1, էջ 46:

2 Տե՛ս "Армянский вопрос и геноцид армян в Турции (1913 – 1919)", Ер. 1995, էջ 186:

սիաների համար: Այնինչ քրդերը քարանում են մահմեդականության եւ տգիտության մեջ, իսկ սրանց մեջ այս միսիոներները չեն էլ մտածում աշխատել»[33]:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ազդեցությունը եւ միջամտությունը Արեւմտյան Հայաստանի վրա թուլացնում էր Ռուսաստանի եւ Օսմանյան Թուրքիայի միջեւ ընկած սահմանը եւ առաջ բերում վերջինիս կառավարության վրդովմունքը: Թուրքիայի հայոց բարձրաստիճան հովվապետները՝ Կոստանդնուպոլսի պատրիարքը եւ Կիլիկիո Կաթողիկոսը իրենց հավատացյալ հոտին վերաբերող հարցերում դրսեւորում էին անհետեւողականություն եւ անկայունություն: Այս էր հիմնականում արեւմտյան միսիոներներին մշտական զիջումների պատճառը:

Տեսնելով, որ արեւմտյան տարբեր կրոնական հոսանքներն ու դավանանքներն արագ ներխուժում են հայոց հողերը եւ տիրում որոշ հայերի մտքերին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը անսպասելիարմար համարեց Ռուսաստանում եւ հատկապես Կովկասում արեւմտյան միսիոներների հետագա զտնվելը:

Դեռեւս ԺԹ դարում Հայ Եկեղեցուն մեծ դժվարությամբ հաջողվեց ազատվել գերմանական բողոքական քարոզիչներից, որոնք Բազելից եկել էին դաշտային Արցախ եւ ձգտում էին ներխուժել Շուշի: Հայ Եկեղեցու ճնշման տակ Կովկասի ցարական իշխանությունը բողոքականներին հեռացրեց Արցախից:

Բապտիստներ- Ի դարի սկզբին Արցախ ներխուժեցին բապտիստները: 1913 թվականին նրանք այնքան ուժեղացան, որ սկսեցին սպառնալ Ղարաբաղի թեմի միասնությանը: Նրանք նույնիսկ որոշ տեղերում կարողացան ստեղծել համայնքներ: Իմանալով այս անցուդարձի մասին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սինոդը հրամայեց Ղարաբաղի թեմի կոնսիստորիային թույլ չտալ բապտիստներին «մուտք գործել գյուղերը, նույնպես եւ քաղաքները եւ ժողովրդին մոլորեցնել իրենց քարոզներով»: Սինոդը Ղարաբաղի թեմի առաջնորդին առաջարկում էր «անհրաժեշտության դեպքում դիմել ոստիկանությանը եւ աջակցություն խնդրել»: 1914 թ. մարտի 28-ին Շուշիի գավառի առաջին մասի ոստիկանական պրիստավ Լեւաշովին ուղղված դիմումում Ղարաբաղի թեմի առաջնորդ Զավեն վարդապետ Մահտեսի-Բաբայանը գրում էր. «Կոնսիստորիայի կողմից հավաքված ստույգ տեղեկություններից հայտնի դարձավ, որ Խանքենդի բնակիչներ Բարսեղ Ավետիսովը եւ Հայկ Ավետիսյանը Խանքենդում, Փահգյուլում եւ շրջակա գյուղերում գաղտնի քարոզում են՝ դրանով իսկ հավատափոխ անելով հայ-լուսավորչականներին, նրանց մեջ տարածելով բապտիզմ:

Հայտնելով այս մասին, ինչպես նաեւ այն կապակցությամբ, որ վերը նշված մարդկանց գործունեությունը օրենքով դատապարտելի է, կոնսիստորիան խնդրում է Զերդ Գերազնվությանը կազմել արձանագրություն Բարսեղ եւ Հայկ Ավետիսյանների ոչ օրինակելի գործողությունների մասին եւ նրանցից ստորագրություն վերցնելով՝ նրանց բերել տալ կոնսիստորիա եւ պատասխանատվության կանչել: Սրա հետ մեկտեղ Խանքենդի եւ մոտակա գյուղի ազգաբնակչությանը հայտնել օրենքի իմաստը՝ արգելելով նրանց բապտիզմի տարածումը»[44]:

---

3 **Р. Бекгулянц**, По Турецкой Армении, Ростов на Дону, 1914, с.144.

4 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 589, թ. 10-16:

Խանքենդի բապտիստական համայնքը շատ ազդեցիկ եւ վտանգավոր էր, որովհետեւ ուներ հետեւորդներ, քարոզչատուն եւ ղեկավարներ՝ Ադամ Բաբայան, Հայկ եւ Բարսեղ Ավետիսյաններ, որոնք ամեն ջանք գործադրում էին ավելի շատ հավատացյալ իլելու Հայ Առաքելական Եկեղեցուց՝ միացնելով նրանց իրենց աղանդին[55]:

Ղարաբաղի թեմի կառավարչի պահանջով Ելիզավետպոլի նահանգապետը 1914 թ. մարտի 29-ին հրամայեց Շուշիի ոստիկանապետին դադարեցնել Շուշի քաղաքում գաղտնի բապտիստ քարոզիչների՝ Արամ Դավթյանի, Առաքել Ահարոնյանի եւ այլոց գործունեությունը, որոնք քարոզում էին Հայ Եկեղեցու հավատացյալների մեջ՝ նպատակ ունենալով նրանց հավատափոխ անել, եւ նրանց օրինական պատասխանատվության կանչել: Որ բապտիստների հանդեպ կիրառվեցին խիստ միջոցներ, այդ մասին վկայում է Ջավեն վարդապետի՝ 1914 թ. մարտի 31-ի նամակը՝ ուղղված Էջմիածնի սինոդին, ուր հայր սուրբը գրում էր. «Ներկա տարում վերստին պաշտոնապես գրեցի Շուշի քաղաքի ոստիկանապետին, Խանքենդի ավանի պրիստավին, հասարակության տանուտերին, շրջանի գործակալին եւ տեղվոյն եկեղեցական ծխական հոգաբարձության, որպեսզի նոքա խիստ միջոցներ ձեռք առնեն հատ ու կենտ մնացած բապտիստների գործունեության դեմ եւ ոստիկանության՝ արձանագրություն կազմելով՝ նրանց պատասխանատվության ենթարկեն հակաօրինական գործունեության համար»: Իր նամակի վերջում Ջավեն վարդապետը գրում էր. «Այս զատկական տոներից հետո, երբ ես կշրջագայեմ թեմում, ամենախիստ եւ կտրուկ միջոցներ ձեռք կառնեմ միանգամայն ընդմիշտ վերջ դնելու բապտիստների գործունեությանը»[66]: Եւ երեւի հայր սուրբը հենց այդպես էլ արել է:

Ռուսաստանի հայ կաթոլիկները- Ռուսաստանի հայ կաթոլիկներին ղեկավարող վարչությունը հիմնվեց 1844 թվականին: Կաթոլիկների ղեկավարը կոչվում էր «Ռուսաստանի եւ ամբողջ Կովկասի հայ կաթոլիկների առաքելական կառավարիչ»: Վարչությունն անմիջապես ենթարկվում էր Հռոմի պապի իշխանությանը եւ ղեկավարվում էր վերջինիս հրամաններով ու ցուցումներով: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ եւ պատերազմի տարիներին հայ կաթոլիկների առաքելական կառավարիչն էր Սարգիս վարդապետ Տեր-Աբրահամյանը:

Բացի համայնքներից ստացվող եկամուտներից՝ վարչությունը ֆինանսավորվում էր նաեւ ցարական կառավարությունից: Հայ կաթոլիկ համայնքներ եւ եկեղեցիներ կային Թիֆլիսում, Բորչալուում, Ախալքալաքում, Ախալցիխայում, Ցիխալտուբոյում, Բորժոմում, Ղրիմում, Կարսում, Սիմֆերոպոլում, Խարկովում, Տիրասպոլում, Եկատերինոդարում: Ռուսաստանի բոլոր հայ կաթոլիկների երկու երրորդը գտնվում էր Ախալքալաքում եւ Ախալցիխայում: Հայ կաթոլիկների առաքելական կառավարչին ենթարկվում էին նաեւ վրաց կաթոլիկները: Հայ երիտասարդ կաթոլիկներն իրենց կրթությունն ստանում էին Լազարյան ճեմարանում, Տիրասպոլի եւ Սարատովի կաթոլիկ հոգեւոր սեմինարիաներում: Պատերազմի ժամանակ ռուսական կառավարության կողմից հայ կաթոլիկներին զինվորական ծառայությունից տարկետում էր տրվում[77]: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կաթոլիկների նկատմամբ անբար-

5 Տե՛ս անդ, թ. 8:
6 Անդ, թ. 3:
7 Տե՛ս անդ, 316, ց. 1, գ. 50, թ. 32:

յացակամ չէր, եւ կարելի է ասել, որ նրա վերաբերմունքը ավելի շատ հանդուրժողական էր: Հազվադեպ չէր նաեւ կաթոլիկությունից Հայ Առաքելական Եկեղեցու ոլորտը նույնիսկ բարձրաստիճան կաթոլիկ հոգեւորականների անցումը: Այսպես, 1915 թ. հունիսին՝ պատերազմի եռուն շրջանում, երբ ռուսական զորքերը եւ հայ կամավորները, հարձակվելով թուրքերի վրա, ազատագրում էին Արեւմտյան Հայաստանը, հայ կաթոլիկների ղեկավարներից մեկը՝ Լոռվա Շահնազար գյուղի բնակիչ Վարդան վարդապետ Թումանյանը, դիմելով Մայր Աթոռ Ա. Էջմիածնի դիվանին, խնդրեց «Ընդունել զինքն ի ծոց Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյս, առ որ փափագի ըստ ջերմեռանդութեան ներքին մարդոյն եւ ոչ յակնկալութենէ յուր եւ կամ ի շահուց անձինն»: Վարդան վարդապետի այս խնդրանքը ի կատար ածվեց 1916 թ. հունվարի 12-ին, երբ Նորին Սրբություն Գեւորգ Ե Կաթողիկոսը իր հայրապետական թ. 65 կոնդակով բարեհաճեց «ընդունել զնա ի ծոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյս»:

Հրեաները- Նոր փոխարքա կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի՝ Կովկաս ժամանելուն եւ իր ու իր վարչակազմի՝ հայերի հատկապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ ջերմ հարաբերություններ հաստատելուն պես սկսվեց հրեաների՝ հուդայական հավատից Հայ Առաքելական եկեղեցու ծոցը փոխադրումը: Սա կարելի է բացատրել միայն եւ միայն այն բանով, որ Ռուսաստանում ամենուրեք հետապնդում էին հուդայահավատ հրեաներին. նրանց մուտքը ուղղափառություն սահմանափակված էր. կաթոլիկություն ընդունում էին դժկամորեն, ուստի միակ դավանանքը, որը մոտ էր ուղղափառությանը եւ միեւնույն ժամանակ Ռուսաստանում լինելով ազդեցիկ՝ կարող էր պաշտպանել իրենց շահերը, հայ դավանանքն էր եւ Հայ Առաքելական Եկեղեցին:

Առաջին հրեան, որին Ս. Էջմիածնի սինոդը թույլատրեց ընդունել Հայ Եկեղեցու ծոցը եւ մկրտել Հայ Եկեղեցու ծեսով, Երեւանի բնակչուհի Բասիա Սելցերն էր: Սինոդը 1912 թ. սկզբներին պատվիրեց Երեւանի կոնսիստորիային «ճշմարտությամբ կատարել օրինաց XI հատ. 7 հոդ. հավելված կանոնների պահանջները»[88]: Նույն թվականի մարտի 14-ին սինոդը թույլատրեց մկրտել Հայ Եկեղեցու ծեսով նաեւ Գորիս քաղաքի վերաբնակչուհի հրեուհի Ռեբեկա Այզենբերգին, «պահպանելով օրենքի բոլոր պահանջները»[99]: Կովկասի սահմաններից դուրս հրեաներին Հայ Եկեղեցու ծոցն ընդունելու թույլտվություն տալիս էր Ռուսաստանի Ներքին գործոց նախարարությունը: Այսպես, 1913 թ. ապրիլի 22-ին թ. 3981 գրությամբ ներքին գործոց նախարարը Ասպրահանի հայոց թեմի կոնսիստորիային թույլատրեց Հայ Եկեղեցու ծեսով մկրտել Խարկովի վերաբնակիչ Լեյբ Սկլովսկուն եւ իր փոքրահասակ աղջկան[1010]:

1914 թ. Հայ Առաքելական Եկեղեցու ծեսով մկրտություն ստանալու խնդրանքով Մայր Աթոռ Ս. Էջմիածնին դիմեցին Թիֆլիսի բնակիչ Այզեկ Գուրիսը, Վլադիկավկազի բնակիչներ Մոշե Գիրշոնը եւ Լեոնտի Մորգուլիսը, ինչպես նաեւ Խարկովից Ելկե Մերսոնը[1111]:

Հայ Առաքելական Եկեղեցու ծոցն անցնող հրեաների թիվը 1914 թ. միանգամից աճեց,

8 «Արարատ» 1912, թ. 2, էջ 102:
9 «Արարատ» 1912, թ. 4, էջ 294:
10 «Արարատ» 1913, թ. 8-9, էջ 693:
11 Տես ՀԱԱ ֆ. 56, ց. 14, գ. 265, թ. 13:

եւ դա հատկապես զգացվեց, երբ Նոր Նախիջեւանի փոխանորդությունը եւ տեղի փոխանորդ Գեւորգ վարդապետ Չորեքչյանը 1914 թ. սեպտեմբերի 15-ին դիմեցին Նոր Նախիջեւանին եւ Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը թ. 208 հայտարարությամբ, ուր մասնավորապես նշվում էր, «որ հրեադավանների մուտքը Հայ Եկեղեցու ծոցը հայ ընտանիքի համար միայն կազմալուծող նշանակություն կարող է ունենալ, քանի որ այդպիսի դավանափոխություններ, ինչպես փորձը ցույց է տալիս, գլխավորապես կատարվում են ամուսնական հաշիվներով, որով կազմվում են ընտանիքներ, որոնց դաստիարակող սյունը՝ ընտանիքի մայրը, ո՛չ ծանոթ է ազգային սովորություններին եւ ո՛չ էլ գիտակ մայրենի լեզվին, եւ ուրեմն անընդունակ հայ ընտանիք կազմելու, որ եղել է եւ պիտի լինի հիմքը ազգային հոգու պահապան»:

Հենց այս հարցի կապակցությամբ Նոր Նախիջեւանի փոխանորդությունում գումարվել էր քահանայական ժողով, ուր մշակվել էր «Հրեությունից Հայ-լուսավորչական Եկեղեցու ծոցը մտնողների համար» խստապահանջ մի ծրագիր-հրահանգ:

1914 թ. վերջին Հայ Եկեղեցու ծեսով մկրտվեցին Շամախիի թեմի Բալաջախում ապրող հրեուհի Գերշենֆելդը, Շուշիի բնակչուհի Մարիա Պարադիզը:

1915 թ. Հայ Եկեղեցու ծոցն անցան Վաղարշապատի բնակչուհի Պիրել Ջեյդմանը, Խարկովի բնակչուհի Ռիվկա Գուրեւիչը:

1916 թ. հունվարի 29-ին թ. 40 հայտարարությամբ Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը Ս. էջմիածնի սինոդին առաջարկեց Գեւորգ վարդապետ Չորեքչյանի կազմած ծրագիրը: Նույն թվականի մարտի 26-ին այդ հրահանգ-ծրագիրը հաստատվեց Վեհափառ Հայրապետի կողմից եւ ապրիլի 1-ին թ. 766 մակագրությամբ հանձնվեց սինոդին ի գործադրություն[1212]:

1916 թ. Հայ Եկեղեցու ծոցն անցան Սոչիի բնակչուհի Օլգա Ջեյդմանը, Տոբոլսկից՝ Պեսսե Ռիսլերը, Թիֆլիսից՝ Դվոյրա Գուլկոն, Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Ղարաքիլիսայի վերաբնակչուհի Գուրա Խայկինան, ինչպես նաեւ Դվոյրա Ռուբինան եւ Վլադիմիր Վասիլեւիչ Թառուցեւիչը:

Թիֆլիսի բնակիչ, Նովոսիբիրսկի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող Իսիդոր Այզբերգը պատճառաբանություն չգտնելով՝ գրեց. «Իմ առողջական վիճակի ծանր լինելը ստիպում է ինձ խնդրել Ձեզ հրամայել արագացնել իմ՝ Հայ Լուսավորչական Եկեղեցու ծոցն անցնելը»:

Նա եւս ընդունվեց Հայ Առաքելական Եկեղեցու ծոցը[1313]:

1916 թ. մայիսի 31-ին Կովկասի փոխարքայի դիվանը բավարարեց հրեա Մոիսեյ Սեյդմանի խնդրանքը՝ հուդայությունից Հայ Եկեղեցու ծոցը մտնելը:

1916 թ. դեկտեմբերի 19-ին բաքվեցի հրեա Մոիսեյ Յանկելի Կուրովերը «յուրացնելով Հայ Լուսավորչական Եկեղեցու կանոնները»՝ խնդրում էր թույլատրել իրեն քրիստոնեություն ընդունել «ներքին համոզմունքով»: 1917 թ. մայիսի 23-ին նրա խնդրանքը բավարարվեց[1414]:

---

12 ՀԱԱ ֆ. 56, ց. 14, գ. 272, թ. 5-7:
13 ՀԱԱ ֆ. 56, ց. 14, գ. 323, թ. 4-8:
14 ՀԱԱ ֆ. 56, ց. 14, գ. 320, թ. 2:

1917 թ. իր իսկ հարցումում Հովհաննես քահանա Զուբարյանը Ս. Էջմիածնին հայտնում էր, որ Ջիլբերմանը ուզում է ընդունել Հայ Եկեղեցու դավանություն: Նա իմանում էր միայն «Հայր մեր» եւ հարցնում էր, թե հարկավո՞ր է իրեն լուրջ քննության ենթարկել: Նույնը հարցնում էր նաեւ ուրիշ հրեայի՝ Իոսիֆ Կոնիի մասին[1515]:

Նույն՝ 1917 թ. Հայ Եկեղեցու ծոցն անցան Ռեբեկա Աբրամովիչը, Աննա Յուզեֆովիչը, Էսթեր Գինզբուրգը՝ Բաքվից: Սիցիլիա Շկաբլեւսկայան՝ Ասպրախանից, Իրինա Կրեյնեսը՝ Պետրոգրադից, Քսենիա Պոգինան եւ շատ-շատ ուրիշներ: Էսթեր Ավաժանսկայան՝ Պետրովսկից Էջմիածնի սինոդին գրում էր. «Ներքին համոզմամբ վերջնականորեն եւ անվերադարձ ես որոշել եմ քրիստոնեություն ընդունել: Քահանան սրուգել է իմ գիտելիքները եւ որոշել է, որ ես պատրաստ եմ քնություն հանձնելու եւ ընդհանրապես ես ինձ քրիստոնյա եմ համարում»[1616]:

Հայ եկեղեցին միշտ բարյացակամ էր վերաբերվում հրեաներին, եւ 1916 թ. հունիսի 7-ին Թիֆլիսում Վեհափառի հետ հանդիպելիս հրեաների ռաբբի Մենդել Մարկոսը հայտնեց նրան իր շնորհակալությունը[1717]:

Հուդայությունից Հայ Առաքելական Եկեղեցի անցումը վերջացավ Ռուսաստանում միապետության տապալումից եւ ժամանակավոր կառավարության կողմից 1917 թ. հուլիսի 20-ին ընդունված խղճի ազատության մասին որոշումից հետո, ուր մասնավորապես ասվում էր, որ քաղաքացիական եւ քաղաքական իրավունքներից օգտվելը կախված չէ հավատի պատկանելությունից, ոչ ոք չի կարող հետապնդվել, եւ ոչ մեկի իրավունքներն ու համոզմունքները չեն կարող սահմանափակվել հավատի պատճառով[1818]:

Վերջին հրեան, որը ցանկացավ անցնել Հայ Եկեղեցու ծոցը եւ մկրտվել Հայ Եկեղեցու ծեսով, ֆելդշեր Ախարդ Սամոյլովիչն էր՝ Ռոստովից, որը, 1918 թ. օգոստոսի 15-ին դիմելով Նոր Նախիջեւանի հոգեւոր կառավարությանը, հայտնեց իր խնդրանքը[1919]:

Բացի հրեաներից Հայ Եկեղեցու ծոցն էին ցանկանում անցնել նաեւ ուրիշ ժողո-վուրդների ներկայացուցիչներ: Այսպես, 1914 թ. փետրվարի 10-ին Մայր Աթոռին այդպիսի ցանկություն հայտնեց մահմեդական Հասան Մեշադի Հուսեյն օղլի Փաշաեւը[2020], 1915 թ. ապրիլի 17-ին՝ Արաս Ալի Ջաբար օղլին[2121]: 1916 թ. Մայր Աթոռի սինոդը թույլատրեց Հայ Եկեղեցու ծեսով մկրտել Բաքվի բնակիչ ազնվական Սուլեյման բեկ Ջաբարբեկի Սելիմբեկովին, որը ցանկանում էր «գիտակցելով եւ համոզմունքով մահմեդականությունից քրիստոնեական հավատի անցնել»[2222]:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հարաբերությունները Վրաց Ուղղափառ Եկեղեցու հետ- Հայ Առաքելական Եկեղեցին եւ հատկապես Մայր Աթոռ Ս. Էջմիածինը սերտ կապերի մեջ էին Ռուսական կայսրությունում բոլոր կրոնների եւ Եկեղեցիների հետ: Անչափ մոտ էին այդ կապերը Վրաց Ուղղափառ Եկեղեցու հետ: Վեհափառ Հայրապետը Թիֆ-

15 Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. 134, վավ. 142:
16 ՀԱԱ ֆ. 56, ց. 14, գ. 289, թ. 5:
17 Տես «Արարատ», 1916, հուլիս-օգոստոս, էջ 503:
18 Տես ՀԱԱ ֆ. 56, ց. 14, գ. 327, թ. 4:
19 Տես ՀԱԱ ֆ. 54, ց. 1,գ. 2754, թ. 7:
20 Տես ՀԱԱ ֆ. 56, ց. 14, գ. 280, թ. 2:
21 Տես ՀԱԱ ֆ. 56, ց. 14, գ. 294, թ. 3:
22 ՀԱԱ ֆ. 56, ց. 14, գ. 306, թ. 2:

լիս իր ճանապարհորդությունների ժամանակ փոխարքայի հետ հանդիպելիս անպայման հանդիպում էր նաև Վրաց Ուղղափառ Եկեղեցու էկզարխների հետ, որոնք, որպես կանոն, ռուսներ էին: Դեռևս ԺԹ դարի սկզբին, երբ Վրաստանը միացավ ռուսական կայսրությանը, վրաց պատրիարքությունը փոխարինվեց ռուսական կառավարության կողմից նշանակված էկզարխներով, Վրաց Եկեղեցին էլ կորցրեց ինքնուրույնությունն ու անկախությունը:

Վրաց Եկեղեցու էկզարխները երկար չէին մնում իրենց պաշտոնին եւ արագ տեղափոխվում էին ավելի բարձր Ռուս Ուղղափառ Եկեղեցու պաշտոնների: Այսպես, 1896 թ. Վրաց Եկեղեցու էկզարխն էր Քարթլի-Կախեթի արքեպիսկոպոս Վլադիմիր սրբազանը, 1905-ին՝ Նիկոլայը, 1911-ին՝ Իննոկենտին, 1914 թ.՝ Ալեքսին, 1914 թ. վերջերից՝ Պիտիրիմ սրբազանը:

1914 թ. Թիֆլիսում Նիկոլայ Բ-ի հետ հանդիպելուց հետո Գեւորգ Ե Կաթողիկոսը հանդիպեց եւ զրույց ունեցավ Պիտիրիմ արքեպիսկոպոսի հետ: 1915 թ. Կովկասի նոր նշանակված փոխարքա մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաեւիչի հետ Վրաստանում նշանակվեց նաեւ նոր էկզարխ՝ Պլատոն արքեպիսկոպոսը: 1915 թ. հունիսի 27-ին Վեհափառը հանդիպեց Պլատոն սրբազանին, որը մանրամասն պատմեց իր մասին: Նա ինը տարի դասավանդել էր բարոյագիտություն Կիեւի հոգեւոր ճեմարանում, որից հետո չորս տարի եղել էր Ամերիկայի Ռուս Ուղղափառ Եկեղեցու առաջնորդը: Կովկաս ժամանելուն պես շրջագայել էր այս երկրով եւ այցելել Լոռվա հայոց եկեղեցիները: Հասկանալով, որ այս ճանապարհորդության մասին Վեհափառ Հայրապետին տեղյակ չպահելը կարող էր հասկացվել որպես զավթողական նկրտում, նա հայոց Կաթողիկոսին հայտնեց, որ իր այդ ճանապարհորդության համար ինքը չի կշտամբվի, եւ՝ «եթե սխալված եմ՝ կների ինձ»: Նորին Վեհափառությունը հայտնեց Պլատոն սրբազանին, որ իր կողմից ոչ մի արգելք չկա այդ կապակցությամբ, մանավանդ որ այդպիսի արգելքները քրիստոնեական սիրո դեմ են:

Պլատոն արքեպիսկոպոսը խոստովանեց. «Կաթոլիկ եկեղեցի չէի հաճախել, որովհետեւ Կաթոլիկ Եկեղեցին այնպիսի պատնեշներ է դրել իր շուրջը, որ օտարները դժվարությամբ են մտնում այնտեղ»[2323]:

Վրաց Եկեղեցու էկզարխների հովանու ներքո գործում էր նաեւ Սալմաստի Ուղղափառ ասորիների Եկեղեցու ռուս առաջնորդ Սերգի եպիսկոպոսը, որը ձգտում էր Սալմաստի շրջանի մի քանի գյուղերում եղած հայ եկեղեցիները ուղղափառ ասորի եկեղեցիների վերածել: Օրինակ, որպեսզի Սալմաստի շրջանի Գյուլիզան գյուղի Ս. Սարգիս եկեղեցին դարձնի ուղղափառ, Սերգի եպիսկոպոսը ձերբակալել է տալիս եկեղեցու պահակ Աստվածատուր Ամիրխանյանին եւ 1914 թ. ապրիլին գրավում ավանդական հայ եկեղեցին[2424]:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը պայմաններ ստեղծեց, որպեսզի Վրաց Ուղղափառ Եկեղեցին, անջատվելով ռուսական ուղղափառությունից, ընտրի իր Կաթողիկոս-պատրիարքին: Կաթողիկոս-պատրիարք ընտրված էր Կիրիոն եպիսկոպոսը, որի օծումը պետք է տեղի ունենար 1917 թ. հոկտեմբերի 1-ին: Կիրիոն Կաթողիկոսին շնորհավորելու եւ նրա օծմանը մասնակցելու համար կաթողիկոսական նստավայր Մցխեթ ուղարկվեցին Երեւանի փոխթեմակալ Խորեն սրբազանը, Միսիթար եւ Բագրատ եպիսկոպոսները: Կի-

23 Մատենադարան, Մատթեոս արքեպ. Մատթեոսյանի արխիվ, թղթ. 168, վավ. 33:
24 Տես ՀԱԱ ֆ. 57, ց. 2, գ. 1960, թ. 4-5:

բիոնն ընդունեց Վեհափառ Հայրապետի պատվիրակներին եւ հոտնկայս ունկնդրեց հայոց Կաթողիկոսի շնորհավորական կոնդակը: Վրաց Կաթողիկոսն ասաց, որ իր գլխավոր նպատակն է քարոզիչ լինել իր հոտին, հարեւան հայ ժողովրդի հետ սիրով եւ խաղաղությամբ ապրել[2525]:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին փոխհարաբերությունները Ռուս Ուղղափառ Եկեղեցու հետ- Ինչ վերաբերում է զուտ Հայ Առաքելական եւ Ռուսական Ուղղափառ եկեղեցիների փոխհարաբերություններին, ապա նման կապերը Առաջին աշխարհամարտի տարիներին շատ չնչին էին եւ, ինչպես վերը նշվեց, հանգեցվել էին ոչ թե դավանական հարցերի, այլ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Վրաստանի Էկզարխի հանդիպումներին: Դեռեւս ԺԹ դ. վերջին Երեւանի նահանգի եւ Կարսի մարզի բոլոր ուղղափառ եկեղեցիները միավորվել էին եւ ենթարկվում էին Գորիի եպիսկոպոսությանը: Ռուս վերաբնակիչների հոսքի ավելացման պատճառով Ռուս Ուղղափառ Եկեղեցու ղեկավարության առջեւ հարց բարձրացավ Երեւանում, Վաղարշապատում եւ Ալեքսանդրապոլում կառուցել նոր ռուսական ուղղափառ եկեղեցիներ, ինչպես նաեւ ստեղծել Երեւանի եպիսկոպոսությունը՝ Լեոնտի եպիսկոպոսի գլխավորությամբ: Պատերազմն սկսվելուն պես ինչպես հայկական, այնպես էլ ռուսական զորամիավորումներում, ստեղծվեց զինվորական հովվի պաշտոնը:

Այսպես, Կարսի մարզի Պլոդորոդնոե գյուղի ծխատեր Դմիտրի քահանան նշանակվել էր 16-րդ Կովկասյան հրաձգային գնդի զինվորական քահանա[2626]:

1914թ. նոյեմբերին Սարիղամիշի ուղղությամբ թուրքերի հարձակման ժամանակ «կողոպուտի եւ պղծման ենթարկվեցին» Կարսի մարզի ռուսական Ալիխան գյուղի Ս. Նիկոլայի եւ Եղթելիք գյուղի Ս. Գեորգիի ուղղափառ եկեղեցիները, եւ 1915 թ. օգոստոսի 15-ին Զավաջինսկու ծխատեր Ա. Պապանդոպուլո քահանան գրում էր. «Սուրբ Աթոռները բոլորովին մերկացված են»[2727]:

Հայ Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջեւ շփումները տեղի էին ունենում ամենատարբեր խնդիրների շուրջ: Այսպես, 1916 թ. փետրվարի 4-ին Կուբանյան կազակական զորքի 1-ին Թամանյան գնդի քահանան Պավել Ուսպենսկին, Գեորգ Ե Կաթողիկոսին հանձնեց Վանա լճի ափին քրդական ավազակախմբի կողմից գրավված եւ Հայ Եկեղեցուն պատկանող սրբությունները՝ երկու ոսկեջրած արծաթե խաչ, եպիսկոպոսական գավազանի երախակալ, արծաթե բաժակակալներ[2828]:

Պատերազմի ժամանակ զոհված ռուս զինվորներին եւ կազակներին երբեմն թաղում էին հայկական գերեզմանոցներում: Այսպես, 1914 թ. զոհված կազակ Ռոման Մալցեւին զինվորական քահանա Վասիլի Բոգդանովը թաղեց Բաշքեյ գյուղի հայկական գերեզմանոցում[2929]:

25 Տես ՀԱԱ ֆ. 57, ց. 2, գ. 507, թ. Յեւ13 եւֆ. 57, ց. 2, գ. 511, թ. 1:
26 Տես ՀԱԱ ֆ 63, ց. 1, գ. 15, թ. 22:
27 Անդ, թ. 18:
28 Տես ՀԱԱ ֆ. 57, ց. 2, գ. 185, թ. 4:
29 Տես ՀԱԱ ֆ. 63, ց. 1, գ. 244, թ. 30: